ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4093-Ա « 20 » օգոստոսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի Հ.1192-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 14/05/2026թ. «Գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» հ.Կ-14052026-01-0079 որոշումը, քաղաքացի Արմենակ Պանյանի՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները (03.06.2026թ. հ.Դ-57254-26, 13.07.2026թ. հ.Դ-72675-26, 12.08.2026թ. հ.Դ-85563-26).

1. Երևանի քաղաքապետի 2026թվականի մարտի 4-ի «Երևան, Աջափնյակ, Ռ.Մելիքյան փողոց հ.104 հասցեում՝ սեփականության իրավունքով քաղաքացի Արմենակ Լևոնի Պանյանին պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին» հ.1192-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «343,1 քառ.մետր» բառերը փոխարինել «335.6 քառ.մետր» բառերով:

2) Որոշման 3-րդ կետի 1)-ին ենթակետում «1312685 (մեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար վեց հարյուր ութսունհինգ)» բառերը փոխարինել «1284403 (մեկ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր երեք)» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ